

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԳՐԱՆՑՎԱԾ Է

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» Ունիվերսալ վարկային
կազմակերպություն փակ բաժնետիրական
ընկերության

Հիմնադիր ժողովի 06/09/2011թ. թիվ 1 որոշմամբ,

Փոփոխված է «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ»

Ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ
բաժնետիրական ընկերության

Ընդհանուր ժողովի թիվ 3/01 որոշմամբ,

Ընդհանուր ժողովի թիվ 5/01 որոշմամբ

Ընդհանուր ժողովի թիվ 14/07/08-01 որոշմամբ

Ընդհանուր ժողովի թիվ 14/09/16-01 որոշմամբ

Ընդհանուր ժողովի թիվ 14/12/24-01 որոշմամբ

Ընդհանուր ժողովի թիվ 17/02/28-01 որոշմամբ

Ընդհանուր ժողովի թիվ 18/02/15-02 որոշմամբ

Ընդհանուր ժողովի թիվ 18/10/16-01 որոշմամբ

Ընդհանուր ժողովի թիվ 19/10/14-01 որոշմամբ

Ընդհանուր ժողովի թիվ 19/11/11-01 որոշմամբ

Ընդհանուր ժողովի թիվ 22/03/21-01 որոշմամբ

Ընդհանուր ժողովի թիվ FC003DEC#22/07/04-01/01

որոշմամբ

Ընդհանուր ժողովի թիվ FC001DEC#22/07/04-01/04

որոշմամբ

Ընդհանուր ժողովի թիվ 30/04/2024 DEC 10-02 և

Ընդհանուր ժողովի թիվ 21/05/2024 DEC 10-03

որոշմամբ

Ընդհանուր ժողովի թիվ 11/12/2025 DEC 10-04

որոշմամբ

Ընդհանուր ժողովի թիվ 30/04/2026 DEC 10-02

որոշմամբ

Փոփոխության հերթական համարը՝ 17

Ընդհանուր ժողովի նախագահ

Վահե Բադալյան



ՀՀ կենտրոնական բանկի
նախագահ

Մարտին

Գալստյան

«ՖԱՍԹ ԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
(փոփոխություն)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Ֆասթ Բանկ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Բանկ) հանդիսանում է «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության լիիրավ իրավահաջորդը: «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲ ընկերությունը ստեղծվել է 2011 թվականի սեպտեմբերի 6-ին բաժնետերերի Հիմնադիր Ընդհանուր ժողովի որոշմամբ, իսկ «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ բաժնետերերի Ընդհանուր ժողովի 2021 թվականի մարտի 23-ի որոշման հիման վրա իրականացվել է վարկային կազմակերպության գործունեության տեսակի, որպես բանկի, փոփոխություն և, «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի բաժնետերերի Ընդհանուր ժողովի 2022 թվականի հուլիսի 4-ի որոշմամբ տեղի է ունեցել ֆիրմային անվանման փոփոխություն՝ «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ն վերանվանվելով «Ֆասթ Բանկ» ՓԲԸ:

1.2. Բանկի լրիվ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «Ֆասթ Բանկ» փակ բաժնետիրական ընկերություն,

անգլերեն՝ “Fast Bank” Closed Joint-Stock Company,

ռուսերեն՝ Закрытое акционерное общество “Фаст Банк”:

1.3. Բանկի կրճատ անվանումն է՝

հայերեն՝ «Ֆասթ Բանկ» ՓԲԸ,

անգլերեն՝ “Fast Bank” CJSC,

ռուսերեն՝ ЗАО “Фаст Банк”:

1.4. Բանկի իրավաբանական հասցեն է (փոստային հասցեն)՝ Հայաստանի Հանրապետություն, 0047, ք. Երևան, Նորք-Մարաշ, Գ. Հովսեփյան 32/6:

1.5. Բանկի կազմակերպարավական ձևն է՝ փակ բաժնետիրական ընկերություն:

1.6. Բանկը Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ կենտրոնական բանկում (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) գրանցվելուց հետո և վերջինիս կողմից տրված լիցենզիայի հիման վրա իրականացնում է բանկային գործունեություն, այդ թվում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ ֆինանսական գործունեություն:

1.7. Բանկն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, բանկային գործունեությունը կարգավորող այլ նորմատիվ իրավական ակտերով, սույն կանոնադրությամբ և Բանկի ներքին իրավական ակտերով:

1.8. Բանկի հիմնադիր փաստաթուղթը սույն կանոնադրությունն (այսուհետ՝ Կանոնադրություն) է, որը պարտադիր է Բանկի հիմնադիրների (բաժնետերերի), Խորհրդի և կառավարման մարմինների համար:

1.9. Բանկը՝ որպես իրավաբանական անձ, օժտված է օրենսդրությամբ իրավաբանական անձին տրված բոլոր իրավունքներով և պարտականություններով:

1.10. Բանկը որպես սեփականություն ունի առանձնացված գույք, օրենքով սահմանված կարգով գրանցված ֆիրմային անվանում և ապրանքային նշան, իր անվանմամբ, հարկային ծածկագրով և ՀՀ կառավարության կողմից սահմանված այլ վավերապայմաններ պարունակող կլոր կնիք, դրոշմներ, ձևաթղթեր և համարային կնիքներ՝ Բանկի տարածքային ստորաբաժանումների համար, ինչպես նաև անհատականացման այլ միջոցներ:

1.11. Բանկի գործունեության ընթացքում ձեռքբերված գույքը պատկանում է Բանկին՝ սեփականության իրավունքով:

1.12. Բանկն իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքով (միջոցներով), եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ:

1.13. Բանկը պատասխանատվություն չի կրում իր հիմնադիրների և բաժնետերերի պարտավորությունների համար, եթե չի ստանձնել այդպիսիք:

1.14. Բանկի հիմնադիրները և բաժնետերերը պատասխանատվություն չեն կրում Բանկի պարտավորությունների համար, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, և իրենց

ներդրված կապիտալի սահմաններում կրում են Բանկի գործունեության հետ կապված վնասի ռիսկը:

1.15. ՀՀ-ն, Կենտրոնական բանկը պատասխանատվություն չեն կրում Բանկի պարտավորությունների համար, Բանկը պատասխանատվություն չի կրում ՀՀ-ի և Կենտրոնական բանկի պարտավորությունների համար, բացի այն դեպքերից, երբ Բանկը կամ ՀՀ-ն կամ Կենտրոնական բանկը ստանձնել են այդպիսիք:

1.16. Բանկը երաշխավորում է իր հաճախորդների բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների պահպանումը՝ օրենքով սահմանված կարգով:

1.17. Բանկի օրինական տիրապետման կամ օգտագործման ներքո գտնվող Բանկի հաճախորդների դրամական միջոցների և այլ գույքի վրա կարող է արգելանք, կալանք դրվել, առգրավում կամ բռնագանձում տարածվել օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով: Նման դեպքերում Բանկը պատասխանատվություն չի կրում օրենսդրությամբ նախատեսված կարգով արգելանքի, կալանքի, առգրավման կամ բռնագանձման հետևանքով իր գործընկերների կամ կոնտրագենտների կրած վնասների համար:

1.18. Բանկը կրում է օրենսդրությամբ Բանկին վերապահված իրավունքներ և պարտականություններ, անկախ դրանք Կանոնադրությամբ նախատեսված լինելու կամ չլինելու փաստից, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով այլ բան է սահմանված:

1.19. Բանկը կարող է իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարաններում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.20. Բանկն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:

1.21. Բանկի սեփականության ներքո կարող է գտնվել ցանկացած գույք՝ բացառությամբ գույքի առանձին տեսակների, որոնք, օրենքին համապատասխան, չեն կարող պատկանել Բանկին:

1.22. Բանկն ինքնուրույն է իրականացնում իր հիմնական միջոցների տիրապետումը, օգտագործումը և տնօրինումը, այդ թվում՝ գույքի վերագնահատումը:

1.23. Բանկի գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռքբերելու, այդ իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները, կապված գույքը Բանկի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

1.24. Կանոնադրությունում կատարված փոփոխությունները երրորդ անձանց համար իրավաբանական ուժ են ձեռք բերում դրանք Կենտրոնական բանկի կողմից գրանցման պահից:

2. ԲԱՆԿԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Բանկն իրավունք ունի՝

1) ՀՀ օրենսդրությամբ չարգելված ցանկացած ձևերով ձեռքբերել գույք, այդ թվում՝ արժեթղթեր, տիրապետել, օգտագործել ու տնօրինել դրանք և դրանցից ստացված եկամուտը, այլ օգտակար արդյունքը,

2) ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական միջոցները, ՀՀ-ում և այլ պետություններում ստանալ բանկային և առևտրային վարկեր, օրենսդրությամբ սահմանված կարգով իր անունից թողարկել և տեղաբաշխել արժեթղթեր,

3) օտարել, փոխանակել, օրենսդրությամբ չարգելված այլ ձևերով փոխանցել գույքային իրավունքներ, լինել գրավառու և գրավատու,

4) տարեկան ֆինանսական արդյունքներն ամփոփելուց հետո շահույթի մի մասը փոխանցել կանոնադրական կապիտալին՝ տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ բաժնետոմսերի քանակի ավելացման միջոցով ավելացնելով կանոնադրական կապիտալը,

5) օրենսդրությամբ սահմանված կարգով վճարովի ծառայություններ մատուցել և աշխատանքներ կատարել ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի ու քաղաքացիների, օգտվել նրանց աշխատանքներից և ծառայություններից,

6) ՀՀ-ում և այլ պետություններում իրականացնել ներդրումներ,

7) պահպանելով գործող օրենսդրության պահանջները՝ ստեղծել իրավաբանական անձինք կամ անդամակցել իրավաբանական անձանց միություններին,

8) օգտվել օրենսդրությամբ և Կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

2.2. Բանկը պարտավոր է՝

1) օրենսդրությամբ կամ այլ իրավական ակտերով սահմանված կարգով իրականացնել հաշվապահական հաշվառում, հաշվետվություններ ներկայացնել Կենտրոնական բանկ և ՀՀ լիազորված պետական մարմիններ, հրապարակել ֆինանսական հաշվետվությունները,

2) աշխատանքային պայմանագրեր (համաձայնագրեր) կնքել Բանկի աշխատակիցների հետ,

3) պատասխանատվություն կրել և հատուցել իր կողմից պատճառված վնասը՝ պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու, այլ անձանց իրավունքները խախտելու համար,

4) ապահովել Բանկի փաստաթղթերի (կանոնադրության, գույքի նկատմամբ գույքային իրավունքները հաստատող փաստաթղթերի, հաշվետվությունների, հաշվապահական հաշվառման փաստաթղթերի, ներքին իրավական ակտերի, ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթերի) պահպանումը,

5) կրել օրենսդրությամբ և Կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ:

3. ԲԱՆԿԻ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

3.1. Բանկն իրավունք ունի «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և դրա հիման վրա Կենտրոնական բանկի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերին համապատասխան ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, այդ թվում՝ ամբողջովին թվայնացված խելացի մասնաճյուղեր՝ ապահովելով բրենդի ներկայացվածությունը և Բանկի կողմից առաջարկվող ծառայությունների հասանելիությունը:

Բանկի մասնաճյուղերը նաև կոնտակտ կենտրոններ են, որոնք ապահովում են սպառողներից դիմում-բողոքների ստացումը և ապագա օգտագործողների համար թվային լուծումների իրազեկման և ուսուցման իրականացումը:

3.2. Բանկի առանձնացված ստորաբաժանումները գործում են Բանկի կողմից հաստատված կանոնադրությունների հիման վրա:

3.3. Բանկի առանձնացված ստորաբաժանումների ղեկավարները նշանակվում են Բանկի կողմից և գործում են վերջինիս կողմից տրված լիազորագրերի և առանձնացված ստորաբաժանման կանոնադրության հիման վրա:

3.4. Բանկի առանձնացված ստորաբաժանումները գործում են Բանկի անունից և վերջինիս կողմից տրված լիազորությունների սահմաններում:

3.5. Բանկի առանձնացված ստորաբաժանումների գործունեության համար պատասխանատվություն է կրում Բանկը:

4. ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԻՐԱՎԱՆԱՑՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ

4.1. Բանկի ստեղծման հիմնական նպատակներն են բանկային գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը:

Բանկի որդեգրած ռազմավարությունն է՝ բանկային գործունեության և քիզնեսի թվայնացումն ու թվային լիարժեք էկոհամակարգի ստեղծումն ու կայուն զարգացումը՝ աջակցելով Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական ներառման մակարդակի խթանմանն ուղղված քաղաքականությունը:

4.2. Բանկը բանկային գործունեություն իրականացնելու լիցենզիայի հիման վրա ռեզիդենտների

և ոչ ռեզիդենտների հետ կարող է իրականացնել օրենքով և իրավական այլ ակտերով բանկերին թույլատրված բոլոր ֆինանսական գործառնությունները:

4.3. Բանկը կարող է կնքել քաղաքացիաիրավական ցանկացած գործարք, որն անհրաժեշտ կամ նպատակահարմար է բանկային գործունեություն և ֆինանսական գործառնություններ իրականացնելու համար:

4.4. Բանկը չի կարող իրականացնել արտադրական, առևտրային կամ լիցենզավորման ենթակա այլ գործունեություն, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

4.5. Բանկն ինքնուրույն է որոշում ակտիվային և պասիվային գործառնությունների տոկոսադրույքները, սեփական արժեթղթերի տոկոսադրույքները և մատուցվող ծառայությունների միջնորդավճարների չափերը՝ հաշվի առնելով օրենսդրության պահանջները:

4.6. Բանկի և հաճախորդների փոխհարաբերությունները կրում են պայմանագրային բնույթ և կարգավորվում են օրենքով ու կողմերի միջև կնքված պայմանագրով:

4.7. Բանկը ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերի շրջանակներում կարող է՝

1) ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ հանդիսացող հաճախորդների սպասարկման նպատակով ցանկացած արտարժույթով նրանց անունով բացել, վարել և սպասարկել միջազգային Բանկային պրակտիկայում ընդունված հաշիվներ,

2) այլ բանկերում (այդ թվում՝ օտարերկրյա) բացել թղթակցային, ինչպես նաև միջազգային բանկային պրակտիկայում ընդունված այլ հաշիվներ: Բանկը պարտավոր է ՀՀ դրամով հաշիվ բացել Կենտրոնական բանկում,

3) մատուցել այլ վճարահաշվարկային ծառայություններ,

4) ընդունել ցպահանջ և ժամկետային ավանդներ,

5) ՀՀ օրենքով չարգելված եղանակով ներգրավել փոխառություններ, այդ թվում՝ հրապարակային օֆերտայի միջոցով,

6) տրամադրել առևտրային, սպառողական վարկեր, լիզինգ, հիփոթեքային վարկեր, վարկային գծեր, բանկային երաշխիք, փոխառություններ, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ, ինկասո և ակրեդիտիվով հաշվարկներ, ինչպես նաև ֆինանսավորման այլ գործիքներ,

7) տրամադրել առանց երաշխիքի և այլ ապահովման միջոցների (բլանկային) վարկեր և ստանալ փոխառություններ,

8) թողարկել, գնել (զեղչել), վաճառել և սպասարկել արժեթղթեր, կատարել նման այլ գործառնություններ,

9) իրականացնել ինվեստիցիոն (ներդրումային) և բաժանորդագրական գործունեություն,

10) մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ անձանց արժեթղթերն ու ներդրումները, իրականացնել հավատարմագրային (լիազորագրային) կառավարում, պետական պարտատոմսերի շուկայում իրականացնել մասնագիտացված գործունեություն (դիլերային, բրոքերային, գործակալական, ենթապահառուական),

11) ծառայություններ մատուցելու հետ կապված որոշումներ ընդունելու համար հաճախորդներից պահանջել ֆինանսական հաշվետվություններ և անհրաժեշտ այլ փաստաթղթեր, ստուգել հաճախորդների ֆինանսական վիճակը, հաշվապահական հաշվետվություններում պարունակող տվյալների համապատասխանությունը գործերի փաստացի վիճակին,

12) իրավաբանական անձանցից, իրենց մասնակիցներից, ՀՀ-ից և համայնքներից, այլ պետություններից, միջազգային բանկերից ներգրավել փոխառություններ և կնքել նմանատիպ գործարքներ,

13) գնել, վաճառել, կառավարել բանկային ոսկի, ստանդարտացված ծուլակտորներ և հուշադրամ.

14) գնել, վաճառել, փոխանակել արտարժույթ, ինչպես կանխիկ, այնպես էլ անկանխիկ եղանակով, այդ թվում՝ կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ,

15) ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեքներ,

- 16) մատուցել ֆինանսական և ինվեստիցիոն խորհրդատվություն,
- 17) իրացնել ապահովագրական վկայագրեր և(կամ) պայմանագրեր, օրենքով սահմանված կարգով իրականացնել ապահովագրական գործակալի գործառնություններ,
- 18) ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ,
- 19) իրականացնել պարտքերի հավաքագրման հետ կապված գործողություններ,
- 20) Կենտրոնական բանկի համաձայնությամբ իրականացնել Բանկին բնորոշ միջազգային պրակտիկայում ընդունված գործառնություններ,
- 21) իրականացնել օրենքով չարգելված, ինչպես նաև Կենտրոնական բանկի կողմից թույլատրված՝ օրենքով ուղղակիորեն չնախատեսված այլ գործառնություններ կամ գործունեություն:

4.8. Բանկի կողմից սույն գլխի 4.7 կետի 1-ից 21 ենթակետերով նախատեսված գործառնությունները չեն իրականացվում ՀՀ և/կամ օտարերկրյա օրենսդրություններով սահմանված խաղային (շահումով խաղերի, վիճակախաղի, ինտերնետ շահումով խաղի, բուքմեյքերական, խաղատների) գործունեության մասնագիտացված լիցենզիա ունեցող կազմակերպությունների համար:

4.9. Բանկը ֆինանսական գործառնությունները կատարում է ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով՝ գործող օրենսդրությանը համապատասխան:

4.10. Բանկը, Կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ, կարող է օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված գործառնությունները, ինչպես նաև բանկային գործունեության բնականոն ընթացքն ապահովող այլ (օժանդակ) գործառնությունների կատարումն ամբողջությամբ կամ մասամբ որոշակի ժամկետով կամ անժամկետ պատվիրակել այլ իրավաբանական անձանց՝ պահպանելով ՀՀ օրենսդրության պահանջները:

5. ԲԱՆԿԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ ԵՎ ԱՅԼ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԸ

5.1. Բանկի կանոնադրական հիմնադրամը կազմում է 51,100,863,000 (հիսունմեկ միլիարդ հարյուր միլիոն ութ հարյուր վաթսուներեք հազար) ՀՀ դրամ:

5.2. Բանկի կանոնադրական հիմնադրամը կազմված է 1,609,476 (մեկ միլիոն վեց հարյուր ինը հազար չորս հարյուր յոթանասուներեք) հատ հասարակ (սովորական) բաժնետոմսերից, յուրաքանչյուր բաժնետոմսի անվանական արժեքը՝ 31,750 (երեսունմեկ հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամ:

5.3. Բանկի կանոնադրական հիմնադրամը վճարվում է Ընդհանուր ժողովի կողմից որոշված կարգով և ժամկետներում:

5.4. Բանկը կարող է փոփոխել կանոնադրական հիմնադրամը և իր բաժնետերերի քանակը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում:

5.5. Բանկը կարող է ավելացնել իր կանոնադրական հիմնադրամի չափը՝ բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու կամ լրացուցիչ բաժնետոմսեր տեղաբաշխելու միջոցով:

5.6. Կանոնադրական հիմնադրամում ներդրումները կարող են կատարվել բացառապես ՀՀ դրամով:

5.7. Բանկի կանոնադրական հիմնադրամի ավելացման դեպքում բաժնետերերը պարտավոր են կանոնադրական հիմնադրամի ավելացման մասին որոշմամբ սահմանված կարգով և չափերով կատարել լրացուցիչ ներդրումներ:

5.8. Անձը կամ փոխկապակցված անձինք մեկ կամ մի քանի գործարքների հետևանքով Բանկի կանոնադրական հիմնադրամում կարող են նշանակալից մասնակցություն ձեռք բերել միայն Կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ: Առանց Կենտրոնական բանկի նախնական համաձայնության Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցության ձեռքբերման պայմանագիրն առոչինչ է:

5.9. Բանկը ստեղծում է պահուստային հիմնադրամ (գլխավոր պահուստ)՝ կանոնադրական հիմնադրամի 15 (տասնհինգ) տոկոսի չափով, որը ձևավորվում է Բանկի զուտ շահույթի հաշվին:

Բանկի պահուստային հիմնադրամի համալրումը և օգտագործումն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.10. Պահուստային հիմնադրամը ձևավորվում է Բանկի շահույթից տարեկան մասհանումների միջոցով՝ մինչև սահմանված չափին հասնելը: Պահուստային հիմնադրամին կատարվող մասհանումների չափը սահմանվում է տարեկան զուտ շահույթի 5 (հինգ) տոկոսը:

5.11. Բանկի Ընդհանուր ժողովի որոշմամբ կարող են ստեղծվել նաև այլ հիմնադրամներ: Նշված հիմնադրամների ձևավորման, օգտագործման, նշված հիմնադրամներից հատկացումների կարգը և չափերը սահմանվում են Ընդհանուր ժողովի որոշմամբ:

5.12. Բանկի սովորական բաժնետոմսերի սեփականատերերը կանոնադրական հիմնադրամում նոր տեղաբաշխվող բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունք ունեն:

5.13. Բանկի բաժնետիրոջ կողմից վաճառվող բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը պատկանում է Բանկի այլ բաժնետերերին: Նախապատվության իրավունքի ժամկետը սահմանվում է առաջարկության պահից սկսած 30 օր:

6. ԲԱՆԿԻ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԸ ԵՎ ԱՅԼ ԱՐԺԵԹՂԹԵՐ

6.1. Բանկը կարող է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով թողարկել հասարակ (սովորական), ինչպես նաև մեկ կամ մի քանի տեսակի արտոնյալ բաժնետոմսեր:

6.2. Կանոնադրական հիմնադրամի համալրման նպատակով Բանկը թողարկում է սովորական բաժնետոմսեր, որոնք բաշխվում են բաժնետերերի միջև փակ բաժանորդագրության ձևով:

6.3. Բանկի թողարկած արտոնյալ բաժնետոմսերի ընդհանուր անվանական արժեքը չպետք է գերազանցի նրա կանոնադրական հիմնադրամի 25 տոկոսը:

6.4. Բանկի բաժնետոմսն անբաժանելի է:

6.5. Երկու կամ ավելի անձանց մեկ բաժնետոմսի սեփականատեր հանդիսանալու դեպքում նրանք Բանկում հանդես են գալիս որպես մեկ բաժնետեր:

6.6. Բանկի կողմից իր բաժնետոմսերը գեղջելը, գնելը կամ հատուցմամբ այլ կերպ ձեռքբերելը, դրանք գրավ ընդունելով վարկ տալը արգելվում է, բացի «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի:

6.7. Բանկի կողմից թողարկված բաժնետոմսերի հետգնման դեպքում Բանկը ծանուցում է բաժնետերերին հետգնման ժամկետի սկզբից առնվազն 30 օր առաջ: Ժամկետը, որի ընթացքում իրականացվում է հետգնումը, չի կարող պակաս լինել 30 օրից: Բանկի կողմից ձեռքբերված տեղաբաշխված բաժնետոմսերը չեն տալիս ձայնի իրավունք, հաշվի չեն առնվում ձայների հաշվարկման ժամանակ, այդ բաժնետոմսերով շահութաբաժիններ չեն հաշվարկվում:

6.8. Բանկն իրավունք չունի իր կողմից թողարկվող բաժնետոմսերը տեղաբաշխել բաց բաժանորդագրության միջոցով կամ այլ եղանակով առաջարկել ձեռքբերել դրանք անսահմանափակ թվով անձանց:

6.9. Թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքը պետք է լինի միևնույնը: Բանկն իրավունք ունի միաձուլել տեղաբաշխված բաժնետոմսերը՝ ավելացնելով դրանց անվանական արժեքը:

6.10. Բանկի յուրաքանչյուր ըստ տեսակի բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը բաժնետոմսի տեսակին համապատասխան միևնույն իրավունքները:

6.11. Բանկի մեկ հասարակ (սովորական) բաժնետոմսը դրա սեփականատիրոջը տալիս է մեկ ձայնի իրավունք:

7. ԲԱՆԿԻ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԸ

7.1. Յուրաքանչյուր բաժնետեր իրավունք ունի.

- 1) մասնակցել Բանկի Ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ իրեն պատկանող բաժնետոմսերի չափով՝ ձայների իրավունքով,
- 2) մասնակցել Բանկի կառավարմանը,
- 3) ստանալ շահութաբաժիններ Բանկի գործունեությունից առաջացած շահույթից,

4) առաջնահերթ կարգով ձեռքբերել Բանկի կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը, եթե ՀՀ օրենսդրությամբ այլ բան չի նախատեսված,

5) ստանալ Բանկի գործունեության վերաբերյալ օրենքով սահմանված տեղեկատվությունը, այդ թվում՝ ծանոթանալ հաշվապահական հաշվեկշիռներին, հաշվետվություններին (սույն տեղեկատվությունը Բանկի բաժնետերերին տրամադրվում է անվճար՝ նրանց գրավոր դիմումի հիման վրա, երեք աշխատանքային օրվա ընթացքում),

6) Բանկի բաժնետերերը, որոնք Բանկի կանոնադրական հիմնադրամում տիրապետում են ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի ոչ պակաս 5%-ին, իրավունք ունեն պահանջել ֆինանսատնտեսական գործունեության ստուգում արտաքին աուդիտի կողմից: Այդ դեպքում Բանկի արտաքին աուդիտ իրականացնող անձին ընտրում, նրա հետ պայմանագիր են կնքում, նրա ծառայությունների դիմաց վճարում են ստուգում պահանջող բաժնետերերը, ընդ որում, նրանք կարող են Բանկից պահանջել իրենց կատարած ծախսերի հատուցում, եթե այդ ստուգումն Ընդհանուր ժողովի որոշմամբ արդարացված է եղել Բանկի համար:

7) բաժնետերերի Ընդհանուր ժողովներին իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի,

8) հսկողա գալ առաջարկություններով բաժնետերերի Ընդհանուր ժողովում,

9) քվեարկել իրեն պատկանող լրիվ վճարված բաժնետոմսերի ձայների չափով,

10) հայցով դիմել դատարան Բանկի բաժնետերերի Ընդհանուր ժողովի կողմից ընդունված և գործող օրենքների ու այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով,

11) Բանկի լուծարման դեպքում ստանալ գույքի իր հասանելիք մասը, ունենալ օրենքով, սույն Կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

7.2. Բանկի բաժնետերերը պարտավոր են՝

1) Բարեխղճորեն իրականացնել օրենսդրությամբ և Բանկի կանոնադրությամբ իրենց վերապահված իրավունքները,

2) սահմանված ժամկետում ապահովել հայտարարված բաժնեմասնակցության չափի գումարների ներդրումը Բանկի կանոնադրական հիմնադրամում,

3) չիրապարակել Բանկային և առևտրային գաղտնիք հանդիսացող, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ հրապարակման ոչ ենթակա տեղեկատվությունները,

4) ՀՀ օրենսդրության սահմանված կարգով Բանկի Խորհրդին տրամադրել տեղեկատվություն գործարքներում փոխկապակցվածության և շահագրգռվածության վերաբերյալ,

7.3. կրել ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ պարտավորություններ:

7.4. Բանկի բաժնետերերի ունեատրը վարում է ՀՀ կենտրոնական դեպոզիտարիան:

7.5. Բանկն իրավունք ունի թողարկել պարտատոմսեր, մուրհակներ, ավանդային սերտիֆիկատներ և այլ արժեթղթեր:

7.6. Բանկի արժեթղթերի թողարկումը, գրանցումը, վաճառքը, տեղաբաշխումը, փոխանցումը և այլ եղանակներով օտարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7. Բաժնետոմսի օտարումը պետք է իրականացվի գրավոր ձևով ձևակերպված և նոտարական կարգով վավերացված պայմանագրով:

7.8. Բանկի կանոնադրական կապիտալում բաժնետիրոջը պատկանող բաժնետոմսերի (դրանց մի մասի) վրա բռնագանձում կարող է տարածվել միայն օրենքով սահմանված կարգով՝ պահպանելով Կանոնադրության 5.13-րդ կետով սահմանված նախապատվության իրավունքը, իսկ եթե բաժնետերերից որևէ մեկը չի օգտվում իր նախապատվության իրավունքից, ապա Բանկն իրավունք ունի այդ բաժնետոմսերը ձեռքբերել գրավառուի հետ համաձայնեցված գնով: Բանկի կողմից բաժնետոմսերը ձեռքբերելուց հրաժարվելու կամ դրանց գնի վերաբերյալ համաձայնության չգալու դեպքում բաժնետոմսերը կարող են օտարվել երրորդ անձի:

8. ԲԱՆԿԻ ՇԱՀՈՒՅՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ

8.1. Բանկի շահույթը ձևավորվում է Բանկի գործունեության արդյունքում ստացված

եկամուտների հաշվին:

8.2. Տարեկան գործունեության արդյունքում Բանկի ստացած շահույթը, ենթակա է հարկման՝ ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.3. ՀՀ օրենսդրությանը համապատասխան նախատեսված կարգով և չափերով բյուջեի հանդեպ պարտավորությունները կատարելուց հետո զուտ շահույթի բաշխումն իրականացվում է Կանոնադրությամբ սահմանված ֆոնդերի համալրման, կանոնադրական կապիտալի ավելացման, Բանկի բաժնետերերին շահույթի բաշխման (շահութաբաժինների վճարման) նպատակով կամ Բանկի զարգացման նպատակով կարող է հաշվառվել որպես նախորդ տարիների չբաշխված շահույթ:

8.4. Միջանկյալ (եռամսյակային և կիսամյակային) շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Խորհուրդը: Տարեկան շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Բանկի Ընդհանուր ժողովը՝ Խորհրդի առաջարկությամբ: Միջանկյալ շահութաբաժինների չափը չի կարող գերազանցել նախորդ ֆինանսական տարվա արդյունքներով բաշխված շահութաբաժնի 50 տոկոսը: Տարեկան շահութաբաժինների չափը չի կարող պակաս լինել արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից: Եթե ընդհանուր ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափը սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափին հավասար, ապա տարեկան շահութաբաժիններ չեն վճարվում: Եթե ընդհանուր ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափը սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից ավելի, ապա տարեկան շահութաբաժինները վճարվում են սահմանված տարեկան շահութաբաժնի և տվյալ տարում արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների գումարի տարբերությամբ: Միջանկյալ շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է Խորհրդի՝ միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ, բայց ոչ շուտ, քան տվյալ որոշման ընդունումից 30 օր հետո:

8.5. Ընդհանուր ժողովն իրավունք ունի որոշում ընդունել շահութաբաժիններ չվճարելու մասին:

8.6. Շահութաբաժինների վճարումն արգելվում է, եթե դրանք բաշխելու պահին Բանկի կրած կորուստները (վնասները) հավասար են կամ գերազանցում են այդ պահին Բանկում առկա չբաշխված զուտ շահույթի գումարը, ինչպես նաև օրենքով արգելված այլ դեպքերում:

9. ԲԱՆԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

9.1. Բանկի կառավարման մարմիններն են՝

1) Բանկի բաժնետերերի Ընդհանուր ժողովը,

2) Բանկի Խորհուրդը,

3) Բանկի Տնօրինությունը և Բանկի գործադիր տնօրեն-Տնօրինության նախագահը:

9.2. Բանկի կառավարման մարմինների կազմավորման և գործունեության կարգը, իրավասությունների շրջանակը սահմանվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Բանկերի և բանկային գործունեության մասին» և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքներով և Կանոնադրությամբ: Բանկի կառավարման մարմինների գործունեության կարգավորումը, ինչպես նաև աշխատանքների վարման կարգը սահմանվում է նաև Բանկի իրավասու մարմինների կողմից հաստատված ժողովի, Խորհրդի և Տնօրինության կանոնակարգերով:

9.3. Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Բանկի Խորհուրդը, իսկ գործունեության ընթացիկ ղեկավարումը՝ Բանկի Տնօրինությունը, Գործադիր տնօրեն-Տնօրինության նախագահը՝ Կանոնադրությամբ իրենց տրված լիազորությունների շրջանակներում:

9.4. Բանկն ունի ներքին աուդիտի ստորաբաժանում, համապատասխանության ապահովման գործառույթն իրականացնող պատասխանատու անձ (անձինք), ռիսկերի կառավարման պատասխանատու անձ, գլխավոր հաշվապահ:

9.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

9.1.1. Ընդհանուր ժողովը Բանկի կառավարման բարձրագույն մարմինն է:

9.1.2. Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասություններն են՝

1) Բանկի կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ,

2) Բանկի վերակազմակերպումը,

3) Բանկի լուծարումը,

4) ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարման հանձնաժողովի նշանակումը,

5) Բանկի Խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան Ընդհանուր ժողովներում: Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ Ընդհանուր ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին,

6) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը,

7) բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի չափի ավելացումը,

8) բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով Բանկի կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև Բանկի կողմից ձեռքբերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը,

9) օրենքով սահմանված խոշոր համարվող այնպիսի գործարքի մասին որոշման կայացումը, որի առարկա հանդիսացող գույքի արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-50 տոկոսը, սակայն որի կնքման մասին որոշումը չի ընդունվել Խորհրդի կողմից, և Խորհուրդը որոշում է կայացրել այդ գործարքի մասին հարցը Ընդհանուր ժողովի կողմից քննարկելու մասին,

10) օրենքով սահմանված խոշոր համարվող այնպիսի գործարքի մասին որոշման կայացումը, որի առարկա հանդիսացող գույքի արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 տոկոսից ավելին,

11) Բանկի Խորհրդի ներկայացմամբ Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը,

12) Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը,

13) օրենքով նախատեսված դեպքերում Բանկի բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը

14) Բանկի Ընդհանուր ժողովի վարման կարգի հաստատումը,

15) հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը,

16) Բանկի կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը,

17) բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացիան), բաժանումը,

18) գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածով նախատեսված դեպքերում,

19) Բանկի կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը՝ օրենքով նախատեսված դեպքերում,

20) Բանկի ղեկավար պաշտոնատար անձանց (Խորհրդի նախագահի և անդամների) աշխատանքի վարձատրության չափի սահմանումը,

21) դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը,

22) դուստր և կախյալ ընկերություններին մասնակցությունը,

23) առևտրային բանկերի այլ միությունների հիմնադրումը,

24) առևտրային բանկերի այլ միություններում մասնակցությունը,

25) ՀՀ օրենքով և Կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը:

9.1.3. Կանոնադրության 9.1.2 ենթակետում թվարկված հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել Բանկի Խորհրդին, Գործադիր տնօրեն-Տնօրինության նախագահին, նրա տեղակալներին, Տնօրինության անդամներին, Գլխավոր հաշվապահին կամ այլ անձի, բացառությամբ 9.1.2 կետի 20-ից 24 ենթակետերում թվարկված հարցերի և Բանկի կանոնադրական հիմնադրամի ավելացման հարցի, որոնցով որոշումների ընդունումը Ընդհանուր ժողովի որոշմամբ կարող է փոխանցվել Բանկի Խորհրդին:

9.2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

9.2.1. Բանկի բաժնետերերի Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեն՝

1) Բանկի հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը՝ իրենց պատկանող ձայների քանակով, ինչպես նաև անվանատերերը, եթե նրանք ներկայացնում են իրենց կողմից ներկայացվող բաժնետերերի անվանումները և նրանց պատկանող բաժնետոմսերի քանակը հիմնավորող փաստաթղթեր:

2) Բանկի բաժնետեր չհանդիսացող Խորհրդի անդամները, Գործադիր տնօրեն-Տնօրինության նախագահը և Տնօրինության անդամները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

3) Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման անդամները՝ որպես դիտորդ:

4) Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձը՝ որպես դիտորդ (եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող Ընդհանուր ժողովի օրակարգի հարցերում)

5) Կենտրոնական բանկի ներկայացուցիչները՝ որպես դիտորդ:

6) Բանկի Խորհրդի նախագահի որոշմամբ՝ այլ անձինք:

9.2.2. Տարեկան ժողովը գումարվում է ոչ ուշ, քան ֆինանսական տարվա ավարտից հետո՝ չորս ամսվա ընթացքում:

9.2.3. Ընդհանուր ժողովը գումարվում է տարին առնվազն մեկ անգամ:

9.2.4. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակը կազմվում է Խորհրդի կողմից սահմանված տարվա, ամսվա, ամսաթվի դրությամբ՝ Բանկի բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա:

9.2.5. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի մասնակիցների ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը չի կարող սահմանվել ավելի վաղ, քան Ընդհանուր ժողով գումարելու մասին որոշման ընդունումը, և ավելի ուշ, քան Ընդհանուր ժողովի գումարումից 45 օր առաջ:

9.2.6. Եթե Ընդհանուր ժողովը գումարվում է հեռակա քվեարկությամբ, ապա դրան մասնակցելու իրավունք ունեցող Բանկի մասնակիցների ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը սահմանվում են Ընդհանուր ժողովի գումարման ամսաթվից առնվազն 35 օր շուտ:

9.2.7. Բանկը պարտավոր է բաժնետիրոջ պահանջով 5-օրյա ժամկետում նրան տեղեկանք տրամադրել բաժնետերերի Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակում այդ բաժնետիրոջ ընդգրկված լինելու մասին:

9.2.8. Բանկն իր բաժնետերերի տարեկան և արտահերթ Ընդհանուր ժողովի անցկացման մասին Կենտրոնական բանկին ծանուցում է դրա անցկացումից ոչ ուշ, քան 15 օր առաջ:

9.2.9. Բանկի Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի մասնակիցների ցուցակը կազմելու համար բաժնետոմսերի անվանատերը պարտավոր է ցուցակը կազմելու տարով, ամսով, ամսաթվով տվյալներ տրամադրել այն անձանց մասին, որոնց շահերը ներկայացնելու նպատակով նա տնօրինում է բաժնետոմսերը:

9.2.10. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի մասնակիցների ցուցակը պետք է տվյալներ պարունակի Բանկի յուրաքանչյուր մասնակցի անվան (անվանման), գտնվելու (բնակության) վայրի և Բանկի կանոնադրական հիմնադրամում նրան պատկանող մասնակցության մասին:

9.2.11. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի մասնակիցների ցուցակը

պետք է տրամադրվի ծանոթացման նպատակով Բանկի այն մասնակիցներին, որոնք գրանցված են Բանկի մասնակիցների ռեեստրում:

9.2.12. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի մասնակիցների ցուցակում փոփոխություններ կարող են կատարվել միայն ցուցակը կազմելու ընթացքում թույլ տրված սխալներն ուղղելու կամ դրանում չընդգրկված Բանկի մասնակիցների խախտված իրավունքները և օրինական շահերը վերականգնելու նպատակով:

9.2.13. Ընդհանուր ժողովի օրակարգը հաստատվում է Խորհրդի կողմից:

9.2.14. Ընդհանուր ժողովի գումարման մասին բաժնետերերը պետք է ծանուցվեն Ընդհանուր ժողովի գումարման օրվանից առնվազն 15 օր առաջ: Ծանուցումը պետք է առնվազն պարունակի օրենքով նախատեսված տեղեկությունները, այդ թվում՝ Ընդհանուր ժողովի վայրը, ամսաթիվը, օրակարգի հարցերը: Ծանուցումը պետք է իրականացվի ֆաքսի, էլեկտրոնային կապի միջոցներով, ներառյալ՝ էլեկտրոնային փոստով ուղարկված նամակի, պատվիրված նամակի ուղարկման կամ առձեռն հանձնելու միջոցով:

9.2.15. Տարեկան ժողովից բացի գումարվող ժողովները համարվում են արտահերթ:

9.2.16. Արտահերթ ժողովները գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:

9.2.17. Բանկի բաժնետերերի արտահերթ Ընդհանուր ժողովները՝ այդ թվում՝ հեռակա կարգով Ընդհանուր ժողովները, գումարվում են Բանկի Խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման, Բանկի աուդիտն իրականացնող անձի, առնվազն 10 տոկոս ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջ (բաժնետերերի) կամ Տնօրինության պահանջով:

9.2.18. Արտահերթ ժողովի գումարման վերաբերյալ Բանկի Խորհրդի որոշմամբ սահմանվում է արտահերթ ժողովի գումարման ձևը՝ բաժնետերերի համատեղ ներկայությամբ կամ հեռակա կարգով քվեարկության (հարցման) միջոցով:

9.2.19. Բաժնետերերի տարեկան Ընդհանուր ժողովը չի կարող անցկացվել հեռակա կարգով քվեարկության միջոցով:

9.2.20. Հեռակա կարգով քվեարկությունը կատարվում է օրենքի պահանջներին համապատասխանող քվեաթերթիկների օգտագործմամբ: Քվեարկության արդյունքներն ամփոփվում են օրակարգի յուրաքանչյուր հարցի վերաբերյալ բաժնետերերի կողմից քվեաթերթիկների՝ «կողմ», «դեմ» և «ձեռնպահ» քվեարկության հաշվարկներով:

9.2.21. Հեռակա կարգով Ընդհանուր ժողով անցկացնելու դեպքում, նախապես, առնվազն 30 օր առաջ, Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերին է ուղարկվում Ընդհանուր ժողովի օրակարգը և լրացված քվեաթերթիկները: Էլեկտրոնային, հեռախոսային կամ հեռախոսային կապի միջոցներով Ընդհանուր ժողովի անցկացման քվեարկության դեպքում քվեաթերթիկները (այդ թվում՝ էլեկտրոնային քվեաթերթիկները) տրամադրվում են բաժնետերերին՝ Ընդհանուր ժողովի անցկացման պահից 7 օր առաջ:

9.2.22. Ընդհանուր ժողովը կարող է որոշումներ ընդունել նաև այնպես, որ Ընդհանուր ժողովի ժամանակ բոլոր մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային կապի, հեռուստակապի կամ կապի այլ միջոցներով, ներառյալ՝ էլեկտրոնային փոստի, ծրագրային և հավելվածային հարթակների (այդ թվում՝ բջջային հավելվածների) միջոցով՝ իրական ժամանակի ռեժիմում: Նման Ընդհանուր ժողովը հեռակա (հարցման) կարգով անցկացված չի համարվում, իսկ այդպիսի նիստում ընդունված որոշումները չեն համարվում հեռակա քվեարկության (հարցման) միջոցով ընդունված:

9.2.23. Ընդհանուր ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Բանկի բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50 (հիսուն)-ից ավելի տոկոսին:

9.2.24. Ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են Ընդհանուր ժողովին մասնակցող Բանկի բաժնետերերի, ինչպես նաև տեղաբաշխված բաժնետոմսերի սեփականատերերի ձայների թվի առնվազն 3/4 (երեքչորրորդ) կողմի քվեարկությամբ, եթե օրենքով տվյալ որոշման բնույթով պայմանավորված այլ չափ նախատեսված չէ: Ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ:

9.2.25. Ընդհանուր ժողովները նախագահում է Խորհրդի նախագահը: Եթե Խորհրդի նախագահը բացակայում է, ապա Խորհուրդը պետք է ընտրի Ընդհանուր ժողովի նախագահող:

9.2.26. Ընդհանուր ժողովի նիստերն արձանագրվում են: Արձանագրությունը կազմվում է ժողովի ավարտից 5 (հինգ) օրվա ընթացքում՝ առնվազն երկու օրինակով, որոնք ստորագրում են ժողովի նախագահը և քարտուղարը: Ժողովի նախագահը պատասխանատվություն է կրում ժողովի արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

9.2.27. Բանկի Ընդհանուր ժողովի հետ կապված այլ հարցերը, այդ թվում՝ Ընդհանուր ժողովի նախապատրաստման և անցկացման կարգը, որոնք չեն նախատեսվել Կանոնադրությամբ, կարգավորվում են «Բանկերի և բանկային գործունեության մասին» և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքների դրույթներով, ինչպես նաև Ընդհանուր ժողովի կողմից հաստատված ժողովի վարման կանոնակարգով և այլ փաստաթղթերով:

9.3. ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴ

9.3.1. Բանկի Խորհուրդն իրականացնում է Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ օրենքով Խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում:

9.3.2. Բանկի Խորհրդի կազմակերպման և գործունեության հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ, Կանոնադրությամբ, ինչպես նաև Բանկի բաժնետերերի Ընդհանուր ժողովի կողմից հաստատված Խորհրդի կանոնակարգով:

9.3.3. Բանկի Խորհուրդը պետք է կազմված լինի առնվազն 5 և առավելագույնը 15 անդամից: Խորհրդի քանակական կազմը որոշվում է Ընդհանուր ժողովի կողմից:

9.3.4. Խորհրդի անդամներն ընտրվում են Բանկի տարեկան Ընդհանուր ժողովում Բանկի ներկա մասնակիցների կողմից, իսկ Բանկի Խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում՝ արտահերթ Ընդհանուր ժողովում Բանկի ներկա մասնակիցների կողմից՝ օրենքով և Կանոնադրությամբ սահմանված կարգով: Խորհրդի անդամը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրությամբ և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված չափանիշներին:

9.3.5. Ընդհանուր ժողովին Բանկի Խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ առաջարկություններ կարող են ներկայացնել Բանկի մասնակիցները, ինչպես նաև Խորհուրդը:

9.3.6. Բանկի այն մասնակիցները, որոնք Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) 10 և ավելի տոկոսին, իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվելու Խորհրդի կազմում կամ դրանում նշանակելու իրենց ներկայացուցչին:

9.3.7. Բանկի այն մասնակիցները, որոնք Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) մինչև 10 տոկոսին, կարող են միավորվել և Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) 10 և ավելի տոկոսը համալրելու դեպքում՝ առանց Ընդհանուր ժողովի կողմից ընտրության ընդգրկել իրենց ներկայացուցչին Խորհրդի կազմում:

9.3.8. Կանոնադրության 9.3.7 ենթակետում նշված ձևով ներկայացուցչի ընդգրկումը Խորհրդում հնարավոր է միայն Բանկի մասնակիցների խմբի ստեղծման մասին համապատասխան պայմանագրի առկայության և այդ պայմանագրի վերաբերյալ Ընդհանուր ժողովին տեղեկացնելու դեպքում:

9.3.9. Պայմանագրի պատճենները տրամադրվում են Ընդհանուր ժողովի բոլոր մասնակիցներին՝ Ընդհանուր ժողովի կայացման, իսկ հեռակա կարգով քվեարկության դեպքում՝ լրացրած քվեաթերթիկները Բանկի կողմից ընդունելու համար սահմանված ժամկետի վերջին օրվանից առնվազն 30 օր առաջ:

9.3.10. Խորհրդի անդամները չպետք է միմյանց հետ փոխկապակցված լինեն: Խորհրդի անդամները և տվյալ Բանկի Տնօրինության անդամները չեն կարող լինել միմյանց հետ փոխկապակցված անձինք:

9.3.11. Խորհրդի անդամները վարձատրվում են:

9.3.12. Խորհրդի անդամների պաշտոնավարման ժամկետը սահմանվում է Ընդհանուր ժողովի

կողմից և չի կարող մեկ տարուց պակաս լինել:

9.3.13. Բանկի Խորհրդի նախագահն ընտրվում է Խորհրդի կողմից Խորհրդի անդամների կազմից:

9.3.14. Բանկի Խորհրդի նախագահը՝

- 1) կազմակերպում է Խորհրդի աշխատանքները,
- 2) գումարում և նախագահում է Խորհրդի նիստերը,
- 3) կազմակերպում է Խորհրդի նիստերի արձանագրությունների վարումը,
- 4) նախագահում է Բանկի Ընդհանուր ժողովում,
- 5) կազմակերպում է Խորհրդին կից հանձնաժողովների աշխատանքը:

9.3.15. Բանկի Խորհրդի իրավասություններն են՝

- 1) Բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ՝ Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը,
- 2) Ընդհանուր ժողովի տարեկան և արտահերթ նիստերի գումարումը, օրակարգի հաստատումը, ինչպես նաև դրանց գումարման և անցկացման կազմակերպման հետ կապված՝ նախապատրաստական աշխատանքների իրականացման ապահովումը,
- 3) Բանկի Տնօրինության անդամների նշանակումը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը,
- 4) Բանկում ներքին հսկողության ստանդարտների սահմանումը, Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ձևավորումը, նրա տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը, ներքին աուդիտի աշխատակիցների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը,
- 5) Բանկի տարեկան ծախսերի նախահաշվի ու կատարողականի հաստատումը,
- 6) Բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքի և աշխատատեղերի հաստատումը,
- 7) Բանկի կանոնադրական հիմնադրամի ավելացումը, եթե Կանոնադրությամբ կամ Ընդհանուր ժողովի որոշմամբ նրան տրված է այդպիսի լիազորություն,
- 8) շահութաբաժինների վճարման վերաբերյալ Ընդհանուր ժողովին առաջարկությունների ներկայացումը, այդ թվում՝ շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող Բանկի մասնակիցների ցուցակի կազմումը, որում պետք է ընդգրկվեն Բանկի այն մասնակիցները, որոնք ընդգրկվել են Բանկի մասնակիցների ռեեստրում՝ Բանկի տարեկան Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա դրությամբ,
- 9) Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և Ընդհանուր ժողովին ներկայացումը,
- 10) Ընդհանուր ժողովի հաստատմանը Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի ներկայացումը,
- 11) Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձին վճարման չափի սահմանումը,
- 12) Բանկում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում անհրաժեշտության դեպքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացման վերահսկումը,
- 13) Բանկի կողմից Կանոնադրությամբ սահմանված ֆինանսական գործառնությունների իրականացման կարգը սահմանող ներքին իրավական ակտերի ընդունումը,
- 14) Բանկի տարածքային ստորաբաժանումների կանոնադրությունների և կառուցվածքային ստորաբաժանումների կանոնակարգերի հաստատումը, Բանկի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների միջև գործառնության պարտականությունների բաշխումը,
- 15) Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշման ընդունումը,
- 16) Բանկի պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը,
- 17) Բանկի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը,

18) Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և կարգերի սահմանումը,

19) օրենքով նախատեսված այլ որոշումների ընդունումը:

9.3.16. Կանոնադրության 9.3.15 ենթակետով թվարկված հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է Բանկի Խորհրդի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել Բանկի կառավարման այլ մարմինների կամ այլ անձանց, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

9.3.17. Խորհրդի հաստատած Բանկի տարեկան ծախսերի նախահաշվի շրջանակներում (բյուջե) Բանկի աշխատատեղերի հաստատման իրավասությունը Բանկի Կանոնադրությամբ կամ Ընդհանուր ժողովի որոշմամբ կարող է փոխանցվել Բանկի Տնօրինությանը:

9.3.18. Առնվազն տարին մեկ անգամ Բանկի Խորհուրդն իր նիստում պետք է քննարկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաշվետվությունը (նամակ ղեկավարությանը), ինչպես նաև քննարկի և անհրաժեշտության դեպքում վերանայի Բանկի գործունեության հիմնական ուղղությունները, ռազմավարությունը, կարգերն ու ներքին իրավական այլ ակտերը:

9.3.19. Առնվազն եռամսյակը մեկ անգամ Բանկի Խորհուրդը պետք է քննարկի Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման, Գործադիր տնօրենի-Տնօրինության նախագահի և Գլխավոր հաշվապահի հաշվետվությունները՝ իր սահմանած կարգով և ձևով:

9.3.20. Բանկի Խորհրդի նիստերը պետք է գումարվեն առնվազն երկու ամիսը մեկ: Բանկի Խորհրդի նիստերի գումարման և անցկացման կարգը սահմանվում է Խորհրդի գործունեության կանոնակարգով և Բանկի ներքին իրավական ակտերով:

9.3.21. Բանկի Խորհրդի նիստերը գումարում է Բանկի Խորհրդի նախագահը՝ իր, Խորհրդի անդամի, Բանկի Գործադիր տնօրեն-Տնօրինության նախագահի (Տնօրինության), ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի, Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի, Կենտրոնական բանկի Խորհրդի, ինչպես նաև Բանկի քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) 5 կամ ավելի տոկոս ունեցող մասնակցի (մասնակիցների) գրավոր պահանջով:

9.3.22. Բանկի Խորհրդի նիստերը կարող են գումարվել հեռակա կարգով Կանոնադրությամբ և Խորհրդի գործունեության կանոնակարգով սահմանված կարգով:

9.3.23. Հեռակա կարգով Խորհրդի նիստ անցկացնելու դեպքում, նախապես, առնվազն մեկ օր առաջ, Խորհրդի յուրաքանչյուր անդամին ուղարկվում է նիստի օրակարգը և օրակարգի յուրաքանչյուր հարցի վերաբերյալ ստացվում է նրանց կարծիքները: Հեռակա քվեարկությունն անցկացվում է սահմանված ձևով հարցման պատասխանների կամ քվեաթերթիկների կիրառմամբ: Հեռակա կարգով քվեարկություն անցկացնելու մասին որոշումը և քվեաթերթիկները Խորհրդի անդամներին ուղարկվում են Խորհրդի գործունեության կանոնակարգով նախատեսված տեղեկատվությունների, նյութերի և փաստաթղթերի փոխանակման եղանակներից որևէ մեկով (առձեռն, փոստային հասցեով, էլեկտրոնային փոստով, հեռատիպային և այլ եղանակներով): Խորհրդի անդամների կողմից հարցման պատասխանները կամ քվեաթերթիկները Բանկ ներկայացվում են Հեռակա կարգով քվեարկություն անցկացնելու մասին որոշմամբ սահմանված կարգով և ժամկետներում՝ առձեռն, փոստային հասցեով, էլեկտրոնային փոստով, հեռատիպային և այլ եղանակներով:

9.3.24. Բանկի Խորհուրդը կարող է որոշումներ ընդունել այնպիսի նիստում, որի ժամանակ Խորհրդի նիստի բոլոր մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային կապի, հեռուստակապի կամ կապի այլ միջոցներով՝ իրական ժամանակի ռեժիմում: Նման նիստը հեռակա (հարցման) կարգով անցկացված նիստ չի համարվում, իսկ այդպիսի նիստում ընդունված որոշումները չեն համարվում հեռակա քվեարկության (հարցման) միջոցով ընդունված:

9.3.25. Հեռակա կարգով անցկացվող նիստերում կարող են որոշումներ ընդունվել միայն օրենքով չարգելված հարցերի վերաբերյալ:

9.3.26. Խորհրդի նիստերի քվորումը համարվում է ապահովված, եթե նիստին մասնակցում են Խորհրդի անդամների կեսից ավելին:

9.3.27. Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա Խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ, եթե օրենքով կամ Խորհրդի կանոնակարգով ձայների ավելի մեծ քանակ նախատեսված չէ:

9.3.28. Քվեարկության ժամանակ Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի միայն մեկ ձայն: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անձի (այդ թվում՝ Խորհրդի այլ անդամի) չի թույլատրվում: Ձայների հավասարության դեպքում Խորհրդի նախագահի ձայնը որոշիչ է:

9.3.29. Խորհրդի նիստերի բոլոր հարցերի քննարկումը կարող է տեղի ունենալ միայն Բանկի Գործադիր տնօրեն-Տնօրինության նախագահի պարտադիր մասնակցությամբ, բացառությամբ Բանկի Գործադիր տնօրեն-Տնօրինության նախագահի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման, ինչպես նաև նրա վարձատրության պայմանների հաստատման հարցերի: Բանկի Գործադիր տնօրեն-Տնօրինության նախագահը մասնակցում է Խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով:

9.3.30. Խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից հետո՝ 10-օրյա ժամկետում:

9.3.31. Խորհրդի նիստի արձանագրությունը ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների ճշտության և հավաստիության համար:

9.3.32. Խորհրդի նիստերը վարում է Խորհրդի նախագահը, որն ստորագրում է նիստի որոշումները: Խորհրդի նախագահը պատասխանատվություն է կրում որոշման մեջ առկա տեղեկությունների հավաստիության համար:

9.3.33. Բանկի Խորհուրդն իր աշխատանքն արդյունավետ կազմակերպելու նպատակով կարող է ստեղծել մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովներ (կոմիտեներ): Բանկի Խորհրդին կից հանձնաժողովներում կարող են ընդգրկվել Բանկի Խորհրդի անդամները և Բանկի այլ ղեկավարներ կամ աշխատակիցներ: Բանկի Խորհրդին կից հանձնաժողովների գործունեությունը հիմնվում է հարցերի ազատ քննարկման և կոլեկտիվ լուծման սկզբունքների վրա: Հանձնաժողովները ստեղծվում են Խորհրդի որոշմամբ և գործում են Խորհրդի կողմից հաստատված կանոնակարգերի համաձայն: Բանկի Խորհրդին կից հանձնաժողովների որոշումներն ունեն խորհրդակցական բնույթ:

9.3.34. Ընդհանուր ժողովի կողմից Խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են իր դիմումի համաձայն կամ եթե՝

1) նա դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ:

2) նրա պաշտոնավարման ընթացքում ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց ուժով նրան արգելվում է լինել Բանկի Խորհրդի անդամ (Բանկի ղեկավար):

3) մեկ տարվա ընթացքում բացակայել է Խորհրդի նիստերի առնվազն 1/4-ից անհարգելի պատճառներով կամ ընդհանուր առմամբ (ներառյալ՝ հարգելի և անհարգելի բացակայությունները) նիստերի առնվազն կեսից: Սույն կետի իմաստով իրական ժամանակի ռեժիմով և Կանոնադրությամբ սահմանված հեռակա մասնակցությունը համարվում է լիարժեք մասնակցություն:

4) օրենքով սահմանված կարգով որակազրկվել է կամ զրկվել է որոշակի պաշտոն վարելու իրավունքից:

9.3.35. Խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել նաև լիազորությունների մնացած ժամանակահատվածի, իսկ եթե այդ ժամանակահատվածը մեկ տարուց ավելի է, ապա մեկ տարվա համար սահմանված աշխատավարձը Բանկի կողմից նրան փոխհատուցելու պայմանով:

9.3.36. Բանկն իրավունք ունի Խորհրդի անդամի պաշտոնից ազատված անձից դատական կարգով հետ պահանջելու նրան փոխհատուցված աշխատավարձը՝ դատարանում ապացուցելով Խորհրդի անդամի կողմից պաշտոնեական պարտականությունների թերացման փաստը:

9.4. ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆԸ

9.4.1. Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Բանկի Տնօրինությունը և Բանկի Գործադիր տնօրեն-Տնօրինության նախագահը:

9.4.2. Գործադիր տնօրեն-Տնօրինության նախագահը կարող է ունենալ տեղակալներ: Բանկի

Գործադիր տնօրեն-Տնօրինության նախագահը և Տնօրինության անդամները նշանակվում է (են) Բանկի Խորհրդի կողմից, Գործադիր տնօրեն-Տնօրինության նախագահի տեղակալները՝ Խորհրդի կողմից՝ Գործադիր տնօրեն-Տնօրինության նախագահի ներկայացմամբ:

9.4.3. Տնօրինությունը գործում է Կանոնադրության, ինչպես նաև Խորհրդի կողմից հաստատված Բանկի ներքին փաստաթղթերի (կանոնակարգերի և այլ փաստաթղթերի) հիման վրա, որոնք սահմանում են Տնօրինության նիստերի հրավիրման ու անցկացման ժամկետներն ու կարգը, ինչպես նաև նրա կողմից որոշումների ընդունման կարգը:

9.4.4. Տնօրինության կառուցվածքում պարտադիր ընդգրկվում են Բանկի Գործադիր տնօրեն-Տնօրինության նախագահը և վերջինիս տեղակալները, Գլխավոր հաշվապահը և Խորհրդի առաջարկած տնօրենները:

9.4.5. Գործադիր տնօրեն-Տնօրինության նախագահը՝

1) տնօրինում է Բանկի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Բանկի անունից,

2) ներկայացնում է Բանկը ՀՀ-ում, արտասահմանում և միջազգային կառույցներում,

3) գործում է առանց լիազորագրի,

4) տալիս է լիազորագրեր,

5) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային,

6) բացում է բանկային (այդ թվում՝ թղթակցային) և այլ հաշիվներ,

7) Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Խորհրդի կողմից հաստատվող ներքին իրավական ակտերը, տարածքային ստորաբաժանումների կանոնադրությունները, կառուցվածքային ստորաբաժանումների կանոնակարգերը, Բանկի վարչակազմակերպական կառուցվածքը և աշխատատեղերը,

8) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը, ինչպես նաև ընդունում է անհատական ներքին իրավական ակտեր,

9) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Բանկի աշխատակիցներին,

10) աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,

11) որոշումներ է ընդունում գույքի ձեռքբերման և/կամ Բանկի գույքի օտարման գործարքների վերաբերյալ՝ օրենքով և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված սահմանաչափերի պահանջներին համաձայն,

12) իրականացնում է Տնօրինության նախագահի գործառույթները՝

12.1. կազմակերպում է Տնօրինության աշխատանքները,

12.2. գումարում և նախագահում է Տնօրինության նիստերը, կազմակերպում է Տնօրինության նիստերի արձանագրությունների վարումը,

12.3. ներկայացնում է Տնօրինությունը Խորհրդի նիստերին,

12.4. ստորագրում է Տնօրինության նիստերի որոշումները:

9.4.6. Գործադիր տնօրեն-Տնօրինության նախագահի իրավասությանն են պատկանում Բանկի ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը՝ բացառությամբ Ընդհանուր ժողովի, Խորհրդի և Տնօրինության բացառիկ իրավասություն հանդիսացող հարցերի:

9.4.7. Գործադիր տնօրեն-Տնօրինության նախագահը կազմակերպում է Ընդհանուր ժողովի, Տնօրինության և Խորհրդի որոշումների կատարումը:

9.4.8. Բանկի Տնօրինությունը՝

1) սահմանում է Բանկի կողմից իրականացվող ֆինանսական գործառնությունների (գործարքների) պայմանները, այդ թվում՝ ներգրավվող ավանդների, տրամադրվող վարկերի տոկոսադրույթները, ինչպես նաև մատուցվող ծառայությունների սակագները, ինչպես նաև միջնորդավճարների չափերը,

2) հաստատում է Բանկի աշխատանքի խթանման և խրախուսման պայմանները,

3) հաստատում է կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարների հաշվետվությունները,

4) Խորհրդին ներկայացնելու նպատակով հավանություն է տալիս մասնաճյուղեր, ներկայացուցչություններ և հիմնարկներ ստեղծելու, դրանց գործունեությունը դադարեցնելու հարցերին,

5) Խորհրդին ներկայացնելու նպատակով հավանություն է տալիս Բանկի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնակարգերին, տարածքային ստորաբաժանումների կանոնադրություններին, Բանկի վարչակազմակերպական կառուցվածքին, աշխատատեղերին,

6) Գործադիր տնօրեն-Տնօրինության նախագահի հետ միասին ապահովում է Ընդհանուր ժողովի և Խորհրդի որոշումների պատշաճ կատարումը,

7) Ընդհանուր ժողովի և Խորհրդի հաստատմանը ներկայացնելու նպատակով հավանություն է տալիս վերջիններիս կողմից ընդունման ենթակա ներքին իրավական ակտերին,

8) Բանկի տարեկան ծախսերի նախահաշվի շրջանակներում հաստատում է մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գործունեության եռամսյակային և տարեկան ծախսերի նախահաշիվներն ու դրանց կատարողականները,

9) հաստատում է Բանկի (նաև որպես իրավաբանական անձի) գործունեության կանոնակարգման հետ կապված (բովանդակային նկարագրողական ներքին կարգավորումներ պարունակող) և Խորհրդի ու Ընդհանուր ժողովի իրավասությունների մեջ չընդգրկված ներքին իրավական ակտերը,

10) քննարկում է արտաքին աուդիտի, ներքին աուդիտի ստորաբաժանման, ինչպես նաև այլ իրավասու մարմինների կողմից իրականացված ստուգումների արդյունքները, ինչպես նաև կազմակերպում է բացահայտված թերությունների վերացման վերաբերյալ միջոցառումների իրականացումը,

11) հաստատում է պայմանագրերի օրինակելի ձևերը,

12) իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ, Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով, Բանկի Ընդհանուր ժողովի ու Խորհրդի ներքին իրավական ակտերով, ինչպես նաև Տնօրինության գործունեության կանոնակարգով սահմանված այլ գործառույթներ:

9.4.9. Բանկի Տնօրինության նիստն իրավասու է (քվորում ունի), եթե նիստին անձնական մասնակցության կամ հեռակա քվեարկության ձևով (հարցման միջոցով) մասնակցում են Տնօրինության անդամների կեսից ավելին: Բանկի Տնօրինության որոշումներն ընդունվում են նիստին ներկա Տնօրինության անդամների ձայների մեծամասնությամբ: Տնօրինության յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն: Քվեարկության ժամանակ Տնօրինության յուրաքանչյուր անդամ ունի ձայնի իրավունք: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անձի (այդ թվում՝ Տնօրինության այլ անդամի) չի թույլատրվում:

9.4.10. Գործադիր տնօրեն-Տնօրինության նախագահն ունի որոշիչ ձայնի իրավունք:

9.4.11. Դեմ կամ ձեռնպահ քվեարկած անդամը պարտավոր է հիմնավորել իր կարծիքը:

9.4.12. Բանկի Տնօրինության նիստերը գումարում է Գործադիր տնօրեն-Տնօրինության նախագահը՝ առնվազն ամիսը մեկ անգամ, ինչպես նաև՝ ըստ անհրաժեշտության:

9.4.13. Տնօրինության նիստին Խորհրդակցական ձայնի իրավունքով հրավիրվում է Բանկի ներքին աուդիտի ղեկավարը:

9.4.14. Տնօրինության նիստերն արձանագրվում են: Տնօրինության նիստերի արձանագրությունները ներկայացվում են Խորհրդին, ներքին աուդիտին, Բանկի արտաքին աուդիտին իրականացնող անձին՝ նրանց պահանջով: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից հետո՝ 10-օրյա ժամկետում:

9.4.15. Տնօրինության նիստի արձանագրությունն ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

9.4.16. Այն հարցերը, որոնք օրենքով կամ Կանոնադրությամբ չեն սահմանվել որպես Ընդհանուր ժողովի, Խորհրդի կամ ներքին աուդիտի ստորաբաժանման իրավասությանը պատկանող, պատկանում են Տնօրինության իրավասությանը:

9.4.17. Բանկի Գործադիր տնօրեն-Տնօրինության նախագահի (Տնօրինության) իրավասությանը ենթակա հարցերով որոշումների ընդունումը չի կարող փոխանցվել Բանկի կառավարման այլ մարմինների, Բանկի ներքին աուդիտին, Բանկի Գլխավոր հաշվապահին կամ այլ անձի, բացառությամբ եթե Բանկի Գործադիր տնօրեն-Տնօրինության նախագահի լիազորությունների իրականացումը պատշաճ կերպով ժամանակավորապես փոխանցվել է նրան փոխարինող անձին: Գործադիր տնօրեն-Տնօրինության նախագահի լիազորությունները պատշաճ կերպով ժամանակավորապես կարող են փոխանցվել նրան փոխարինող անձի, եթե վերջինս համապատասխանում է Բանկի ներքին իրավական ակտով սահմանած որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշներին:

9.4.18. Խորհրդի կողմից Գործադիր տնօրեն-Տնօրինության նախագահի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են իր դիմումի համաձայն, կամ եթե՝

1) նա դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

2) նրա պաշտոնավարման ընթացքում ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց ուժով նրան արգելվում է լինել Բանկի Գործադիր տնօրեն-Տնօրինության նախագահ (Բանկի ղեկավար),

3) օրենքով սահմանված կարգով որակազրկվել է կամ զրկվել է որոշակի պաշտոն վարելու իրավունքից,

4) առկա են Գործադիր տնօրեն-Տնօրինության նախագահի աշխատանքային գործունեությունն արգելող կամ դրա իրականացմանը խոչընդոտող այլ հիմքեր:

9.4.19. Գործադիր տնօրեն-Տնօրինության նախագահի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել նաև լիազորությունների մնացած ժամանակահատվածի, իսկ եթե այդ ժամանակահատվածը մեկ տարուց ավելի է, ապա մեկ տարվա համար սահմանված աշխատավարձը Բանկի կողմից նրան փոխհատուցելու պայմանով:

9.4.20. Բանկն իրավունք ունի Գործադիր տնօրեն-Տնօրինության նախագահի պաշտոնից ազատված անձից հետ պահանջելու Կանոնադրության 9.4.19 ենթակետում նշված՝ նրան փոխհատուցված աշխատավարձը՝ դատարանում ապացուցելով Գործադիր տնօրեն-Տնօրինության նախագահի կողմից պաշտոնեական պարտականությունների թերացման փաստը:

9.4.21. Գործադիր տնօրեն-Տնօրինության նախագահ, նրա տեղակալ, չի կարող լինել այն անձը, որը չի համապատասխանում Բանկի ներքին իրավական ակտով սահմանված չափանիշներին:

9.4.22. Բանկի Տնօրինությունն իր աշխատանքն արդյունավետ կազմակերպելու նպատակով կարող է ստեղծել կոմիտեներ: Կոմիտեները ստեղծվում են Տնօրինության որոշմամբ և գործում են Խորհրդի կողմից հաստատված կանոնակարգ(եր)ի համաձայն: Կոմիտեներում կարող են ընդգրկվել Բանկի ղեկավարներ կամ աշխատակիցներ: Կոմիտեների գործունեությունը հիմնվում է հարցերի ազատ քննարկման և կոլեկտիվ լուծման սկզբունքների վրա: Կոմիտեները կարող են ստեղծվել Բանկի հաճախորդների սպասարկման, ակտիվների կառավարման, ռիսկերի կառավարման և բյուջետային հարցերի շուրջ եզրակացություններ տալու, բանկային նոր և գործող ծառայությունների առաջարկների շուրջ եզրակացություններ տալու նպատակով:

9.5. ԲԱՆԿԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ԱՆՂԱՄ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԵՎ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱԴԱՀԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

9.5.1. Բանկի Տնօրինության անդամ տնօրեն(ներ)ը պատասխանատվություն է (են) կրում գործունեության կոնկրետ ոլորտներում իրեն (իրենց) վերապահված պարտականությունների կատարման համար:

9.5.2. Բանկի Տնօրինության անդամները, Գործադիր տնօրեն-Տնօրինության նախագահը և վերջինիս տեղակալները, գլխավոր հաշվապահը բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքներից, կարող են կատարել այլ վճարովի (անհատույց) այլ աշխատանք միայն Խորհրդի համաձայնությամբ:

9.5.3. Բանկի Գլխավոր հաշվապահն իրականացնում է «Հաշվապահական հաշվառման մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքով Գլխավոր հաշվապահի համար սահմանված իրավունքները և պարտականությունները:

9.5.4. Բանկի Գլխավոր հաշվապահի իրավունքները և պարտականությունները չեն կարող փոխանցվել Ընդհանուր ժողովին, Խորհրդին, Տնօրինությանը, Գործադիր տնօրեն-Տնօրինության նախագահին կամ այլ անձի:

9.5.5. Բանկի Գլխավոր հաշվապահը նշանակվում է Բանկի Խորհրդի կողմից՝ Բանկի Գործադիր տնօրեն-Տնօրինության նախագահի ներկայացմամբ:

9.5.6. Բանկի Գլխավոր հաշվապահն առնվազն եռամսյակը մեկ անգամ Բանկի Խորհրդին և Գործադիր տնօրեն-Տնօրինության նախագահին է ներկայացնում ֆինանսական հաշվետվություն՝ Խորհրդի հաստատած ձևով և բովանդակությամբ:

9.5.7. Բանկի գլխավոր հաշվապահը պատասխանատվություն է կրում Բանկի հաշվապահական հաշվառման վարման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Բանկի մասնակիցներին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին Բանկի մասին տրամադրվող ֆինանսական տեղեկությունների հավաստիության համար՝ օրենքին, այլ իրավական ակտերին և Կանոնադրությանը համապատասխան:

9.5.8. Գլխավոր հաշվապահի պահանջների կատարումը՝ կապված հաշվապահական հաշվառման համար անհրաժեշտ տվյալների և փաստաթղթերի ներկայացման հետ, պարտադիր է Բանկի բոլոր աշխատողների համար:

9.5.9. Առանձին տնտեսական գործառնությունների իրականացման հետ կապված՝ Բանկի Գործադիր տնօրեն-Տնօրինության նախագահի և Գլխավոր հաշվապահի միջև տարաձայնությունների դեպքում Գլխավոր հաշվապահը կատարման է ընդունում փաստաթղթերը՝ Գործադիր տնօրեն-Տնօրինության նախագահի կարգադրությամբ (հանձնարարությամբ), և նման գործառնությունների իրականացման հետևանքների պատասխանատվությունը կրում է Գործադիր տնօրեն-Տնօրինության նախագահը:

9.5.10. Բանկի Գլխավոր հաշվապահը և Տնօրինության անդամները պետք է ունենան այդ պաշտոնում աշխատելու համար Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված որակավորում: Գլխավոր հաշվապահի արձակուրդում, ժամանակավոր անաշխատունակության մեջ գտնվելու, ինչպես նաև օրենքով սահմանված այլ դեպքերում բացակայելու ժամկետում նրա պարտականությունների կատարումը Գործադիր տնօրեն-Տնօրինության նախագահի հրամանով դրվում է Գլխավոր հաշվապահի ենթակայության տակ գտնվող ստորաբաժանումների ղեկավարներից որևէ մեկի վրա:

9.6. ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

9.6.1. Ներքին աուդիտի ստորաբաժանումը.

9.6.1.1. Ներքին աուդիտի ստորաբաժանման (այսուհետ՝ ներքին աուդիտ) ղեկավարը և անդամները նշանակվում են Բանկի Խորհրդի կողմից: Ներքին աուդիտի անդամ չեն կարող լինել Բանկի կառավարման մարմինների անդամները, այլ ղեկավարներ ու աշխատակիցներ, ինչպես նաև Տնօրինության անդամների հետ փոխկապակցված անձինք:

9.6.1.2. Ներքին աուդիտի ղեկավարը և անդամները պարտավոր են պահպանել Բանկի աշխատակիցների համար սահմանված աշխատանքային կարգապահությունը:

9.6.1.3. Բանկի ներքին աուդիտը Բանկի Խորհրդի հաստատած կանոնակարգի համաձայն՝

1) անկախ գնահատական է տալիս Բանկի ներքին իսկողության, այդ թվում՝ ռիսկերի կառավարման համակարգերի, Բանկի կառավարման համակարգի և գործընթացների որակի, համարժեքության և արդյունավետության վերաբերյալ,

2) եզրակացություններ և առաջարկություններ է տալիս Բանկի Խորհրդի ներկայացրած, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ առաջադրված հարցերի վերաբերյալ:

9.6.1.4. Ներքին աուդիտի իրավասություններին վերաբերող հարցերը չեն կարող փոխանցվել Բանկի կառավարման մարմինների կամ այլ անձանց լուծմանը:

9.6.1.5. Ներքին աուդիտի ղեկավարը Խորհրդին և Տնօրինությանն է ներկայացնում հետևյալ հաշվետվությունները՝

1) հերթական՝ տարեկան ծրագրով սահմանված ստուգումների արդյունքների մասին.

2) արտահերթ, եթե բացահայտվել են ներքին աուդիտի հիմնավորված կարծիքով էական խախտումներ, ընդ որում, եթե խախտումները հետևանք են Գործադիր տնօրեն-Տնօրինության նախագահի կամ Տնօրինության կամ Խորհրդի գործողությունների կամ անգործության, ապա հաշվետվությունը ներկայացվում է անմիջապես Խորհրդի նախագահին:

9.6.1.6. Կանոնադրության 9.6.1.5 ենթակետով նախատեսված դեպքերում հաշվետվությունները ներկայացվում են խախտումը հայտնաբերելուց առավելագույնը երկու աշխատանքային օրվա ընթացքում:

9.6.1.7. Ներքին աուդիտն օրենքների, այլ իրավական ակտերի խախտումներ բացահայտելու դեպքում պարտավոր է դրանք ներկայացնել Բանկի Խորհրդին՝ միաժամանակ առաջարկելով այդ խախտումների վերացման և ապագայում չկրկնման ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումներ:

9.6.2. Բանկի ռիսկերի կառավարման գործառույթի իրականացման համար պարասխանադրու անձը.

9.6.2.1. Բանկի ռիսկերի կառավարման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը նշանակվում է Բանկի Խորհրդի կողմից և՝

1) բացահայտում, գնահատում է Բանկի գործունեությանը բնորոշ ռիսկերը, տալիս է Բանկի ռիսկի ընդհանուր նկարագիրը.

2) հսկողություն և մոնիտորինգ է իրականացնում բացահայտված ռիսկերի նկատմամբ, ապահովում է դրանց արդյունավետ կառավարումը.

3) Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Բանկի ռիսկերի կառավարման ռազմավարությունը, ռիսկի ընդունելի սահմանաչափը, ինչպես նաև առանձին ռիսկերի կառավարման քաղաքականությունները/ընթացակարգերը, Խորհրդի սահմանած պարբերականությամբ Խորհուրդ և Տնօրինություն հաշվետվություն է ներկայացնում Բանկի ռիսկերի նկարագրի և ռիսկերի կառավարման գործընթացների վերաբերյալ.

4) իրականացնում է Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված ռիսկերի կառավարմանն առնչվող այլ գործառույթներ:

9.6.3. Բանկի համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պարասխանադրու անձը.

9.6.3.1. Բանկի համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը նշանակվում է Բանկի Խորհրդի կողմից և՝

1) ապահովում է Բանկի և Բանկի աշխատակիցների գործունեության համապատասխանությունը օրենքների, այլ իրավական ակտերի, այդ թվում՝ Բանկի ներքին իրավական ակտերի պահանջներին.

2) ապահովում է Բանկում պատասխանատու վարվելակերպի ձևավորումն ու պահպանումը.

3) գնահատում է Բանկի գործունեության վրա օրենքների և այլ իրավական ակտերի հնարավոր փոփոխությունների ազդեցությունը և դրանց հետ կապված հնարավոր ռիսկերը.

4) իրականացնում է Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված համապատասխանության ապահովմանն առնչվող այլ գործառույթներ:

9.7. ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀԱՅՈՂՈՒԹՅՈՒՆԸ

9.7.1. Բանկի գործունեության նկատմամբ վերահսկողության բացառիկ իրավունքը պատկանում

է Կենտրոնական բանկին: Կենտրոնական բանկն այդ վերահսկողությունն իրականացնում է օրենքով և իր կողմից սահմանած կարգով:

9.7.2. Կենտրոնական բանկը Բանկի ստուգումներն իրականացնում է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հիմքերով, դեպքերում և կարգով:

9.7.3. Կենտրոնական բանկն իրականացնում է նաև Բանկի գործունեության ամենօրյա հեռակա վերահսկողություն՝ Բանկի կողմից օրենքով, Կենտրոնական բանկի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերով և դրանց հիման վրա Կենտրոնական բանկի Խորհրդի, նախագահի կամ վերստուգող ստորաբաժանման կողմից պահանջվող՝ Կենտրոնական բանկ ներկայացված հաշվետվությունների, տեղեկանքների, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ փաստաթղթերի կամ տեղեկությունների ստուգման միջոցով:

9.8. ԲԱՆԿԻ ԱՌԻԴԻՏԱՅԻՆ ԱՏՈՒԳՈՒՄԸ

9.8.1. Յուրաքանչյուր տարի Բանկի ֆինանսական գործունեությունը ստուգվում է աուդիտային գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող արտաքին անկախ աուդիտային կազմակերպության կողմից, որին նշանակում է Բանկի Ընդհանուր ժողովը: Արտաքին աուդիտային կազմակերպության վարձատրության չափը որոշում է Խորհուրդը: Արտաքին աուդիտային կազմակերպության ընտրությունը կատարվում է հաշվի առնելով Կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջները:

9.8.2. Բանկի արտաքին աուդիտ կարող է հրավիրվել նաև Խորհրդի կողմից ցանկացած ժամանակ:

9.8.3. Անկախ աուդիտային կազմակերպության եզրակացությունը Բանկը Կենտրոնական բանկ է ներկայացնում ֆինանսական տարվա ավարտից հետո ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում:

9.9. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9.9.1. Բանկի գործառնական տարին սկսվում է հունվարի 1 (մեկ)-ին և ավարտվում նույն տարվա դեկտեմբերի 31 (երեսունմեկ)-ին:

9.9.2. Բանկի գործունեության արդյունքներն արտացոլվում են Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվություններում՝ վերջինիս կողմից սահմանված պարբերականությամբ, ձևերով և կարգով:

9.9.3. Բանկը հաշվապահական հաշվառման վարումը և ֆինանսական հաշվետվությունների կազմումն իրականացնում է հաշվապահական հաշվառման մասին օրենսդրությամբ նախատեսված կանոններին և սկզբունքներին համապատասխան:

9.9.4. Բանկը կազմում և հրապարակում է տարեկան, եռամսյակային և այլ ֆինանսական հաշվետվություններ՝ Կենտրոնական բանկի և ՀՀ Կառավարության լիազորված մարմնի կողմից համաձայնեցված կարգով:

9.9.5. Բանկը ֆինանսական տարվա ավարտից հետո՝ չորսամսյա ժամկետում, մամուլում հրապարակում է իր տարեկան ֆինանսական հաշվետվությունները և աուդիտային եզրակացությունը:

9.9.6. Բանկը մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 15 (տասնհինգ)-ը հրապարակում է իր եռամսյակային ֆինանսական հաշվետվությունները:

9.9.7. Բանկը պարբերաբար հրապարակում է իր գործունեության վերաբերյալ տեղեկություններ՝ Կենտրոնական բանկի սահմանած կարգով և հաճախականությամբ:

9.9.8. Հաշվապահական հաշվառման աշխատանքների ծավալից կախված՝ Բանկի հաշվապահական հաշվառումն օրենքով սահմանված կարգով կարող է վարվել հաշվապահական ծառայություններ մատուցող կազմակերպության կողմից:

10. ԲԱՆԿԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ

10.1. Բանկի Կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելը, ինչպես նաև նոր խմբագրությամբ Կանոնադրության հաստատելը կատարվում է Ընդհանուր ժողովի որոշմամբ, որն ընդունվում է դրան մասնակցած՝ ընդհանուր ծայների առնվազն 3/4-ով:

10.2. Բանկի Կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ ենթակա են գրանցման Կենտրոնական բանկում և ուժի մեջ են մտնում Կենտրոնական բանկում գրանցման պահից:

11. ԲԱՆԿԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

10.3. Բանկը կարող է վերակազմակերպվել՝ մեկ այլ Բանկի հետ միացման և Բանկի վերակազմավորման միջոցով:

10.4. Բանկի վերակազմավորումը (կազմակերպարարական ձևի փոփոխությունը) կատարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և այլ օրենքներով սահմանված կարգով:

10.5. Բանկի միացումը կատարվում է օրենքով սահմանված կարգով:

12. ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

12.1. Բանկի գործունեությունը դադարեցվում է օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

12.2. Բանկը լուծարվում է նրա լիցենզիան անվավեր ճանաչելու, լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու, «Բանկերի, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում, Բանկի Ընդհանուր ժողովի որոշմամբ: